1700-ԱՄՅԱԿ

1700 - ԱՄՅԱԿԻ ՕՐ ՌԱՎԵՆՆԱՅՈՒՄ

Իտալիայի Ռավեննա քաղաքում Դանթեագիտության կենտրոնի կազմակերպած դասական երաժշտության ամենամյա փառատոնի այս տարվա վերջին օրը՝ հուլիսի 22-ը, նվիրված էր Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին:

Այդ առթիվ Ռավեննա էր հրավիրվել 1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Նա Ռավեննա էր ժամանել 1700-ամյակի տոնակատարությունների պետական հանձնախմբի պատվիրակության հետ, որը գլխավորում էր փոխնախագահ Խոսրով Հարությունյանը:

Սրբազան Հայրը, իբրև Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ներկայացուցիչ, Վեհափառ Հայրապետի պատգամը փոխանցեց Ռավեննայի արքեպիսկոպոս Ջուզեպպե Վերուչիին, փառատոնի կազմակերպիչներին և հայ համայնքին:

Այնուհետև Ս. Ֆրանչեսկո Մայր Տաճարում մատուցեց Սուրբ Պատարագ՝ Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարյան միաբանության վարդապետներից մեկը, հայկական ծիսակարգով: Հայաստանի պատվիրակությունն ապա մասնակցեց Դանթեի շիրմի պսակադրության արարողությանը և «Դանթեն Հայաստանում» ու «Հայերի ցեղասպանությունը» թեմաներով ցուցահանդեսների բացմանը:

Օրվա երկրորդ կեսին Ռավեննայի S. Apolinare in Classe եկեղեցում տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք՝ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի նախագահությամբ:

Երեկոյան Հայաստանի պատվիրակության հետ Հայաստան ժամանեցին «Լա Սկալա» օպերային հանրահայտ թատրոնի երգչախումբն ու նվագախումբը:

1700-ամյակին նվիրված օրը եզրափակվեց Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային կենտրոնում «Լա Սկալա» օպերային թատրոնի համերգով՝ հռչակավոր դիրիժոր Ռիկարդո Մուտիի ղեկավարությամբ:

1700-ԱՄՅԱԿԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ